ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՍԻՍԻԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեման՝ «Արժեքային համակարգի ձևավորումը պատմությանդասավանդման ընթացքում»

ԱՌԱՐԿԱ՝ Հայոց պատմություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Սամվել Առաքելյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ «Տոլորսի միջնակարգ դպրոց»ՊՈԱԿ

ՂԵԿԱՎԱՐ՝ Ռուզաննա Խաչատրյան

2023

Բովանդակություն

Նախաբան 2

Գլուխ 1 Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը

առարկայի դասավանդման ընթացքում

1.1 Գրականության ակնարկ 4

1.2 Ազգային և համամարդկային արժեքների հարաբերակցությունը և կարևորությունը նոր սերունդների դաստիարակության գործում 10

1.3 Գործնական համատեքստ 14

Ամփոփում 19

Օգտագործված գրականության ցանկ 20

Նախաբան

Թեմայի արդիականությունը: Ժամանակակից հասարակությունն արմատական փոփոխությունների բարդ շրջան է անցնում: Դա անմիջականորեն ազդում է երիտասարդ սերնդի մտածելակերպի, գործելակերպի,հոգեբանության և արժեքային կողմնորոշումների վրա: Նա այդ գործընթացների անմիջական մասնակիցն է, այդ արժեքների ժառանգորդն ու կրողը: Նրա առջև ծառանում է նոր ժամանակի պահանջներին համապատասխան վերափոխվելու, կարողությունները զարգացնելու և իրացնելու խնդիրը: Ներկայումս կրթությունը վերաճել է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային անհրաժեշտ որակներ: Կրթական միջավայրի և կրթության բովանդակության արդիականացման անհրաժեշտությունը պահանջում է կրթության նկատմամբ պետական և հասարակական հոգածության արմատական բարելավում: Անհրաժեշտ է տնտեսական, քաղաքական, գիտական առաջընթացին համաքայլ շարժվել. չէ՞ որ սաները նոր ժամանակների քաղաքացին են, նրա վաղվա օրը կերտողները: Ուստի անհրաժեշտ է վերահիմաստավորել ուսուցչի դերը: Նա պիտի ինքը սովորի, ինքնակրթվի, ինքնակատարելագործվի, որպեսզի կարողանա սովորեցնել, կրթել ու դաստիարակել:

Շատ կարևոր է, որ պատանիները կարողանան հասկանալ ու ըմբռնել մեր երկրին սպառնացող վտագներն ու մարտահրավերները և իրենց դերը հայրենիք կերտելու գործում:

Այս հանգամանքն ավելի կարևոր է դարձրել այս «քաղաքակրթական խաչմերուկներում» ազգային նկարագիրն ու դիմագիծը անաղարտ պահելու հանգամանքը: Մարդկության պատմության արդի փուլում հայ ժողովուրդը դարձյալ բախվում է այս խնդրին, քանի որ մեր տարածաշրջանում դարձյալ բախվում են աշխարհի մեծ պետությունների շահերը և յուրաքանչյուր երկիր փորձում է իր կողմը գրավել հայ ժողովրդին:

Ազգային արժեքները պահպանելը կարևորագույն խնդիր է ,հատկապես երբ Հայաստանը ծայրահեղ ծանր օրեր է ապրում՝ պարտության դառնահամը բերանում, կորցրած տարածքների ափսոսանքը սրտում, հազարավոր նոր զոհերի կսկիծը սրտում...: Ուստի խիստ անհրաժեշտ է երեխաների մեջ հավատ ներշնչել հայրենիքի ապագայի նկատմամբ, սխալներն ուղղելու անհրաժեշտությունը գիտակցելու, ոտքի կանգնելու, նոր ուժեղ հայրենիք ստեղծելու ուղի մատնանշել: Պատանիների մեջ պետք է արմատացնել, որ հայրենիքն է ամենաբարձր արժեքը: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից

մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքը՝ հայրենասիրությունն է,որը լավագույն կերպով մատուցվում է հայոց պատմության դասընթացների ժամանակ: Այդպես նա պիտի հասնի այն գիտակցության, որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ, գիտելիքների բարձր մակարդակով ու մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ, այլև պահպանմամբ: Սերունդ, որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժանիքները:

Հետազոտության նպատակը. Բացահայտել և հիմնավորել հայ դպրոցականի ազգային արժեհամակարգի, ազգային մտածելակերպի ձևավորման գործընթացում պատմության առարկայի դերն ու կարևորությունը , նաև պատմությունից դասեր քաղելու անհրաժեշտությունը:

Կիրառել մեթոդական հնարներ ,ուսուցման ժամանակակից մեթոդներ սովորողների մոտիվացիան բարձրացնելու համար:

Դպրոցական խմբակների շրջանակներում,ինչպես նաև դասաժամերին անրադառնալ հայ ազգային հերոսների կերպարներին,սխրանքներին,որոնք ավելի կոգևորեն սովորողներին, կդաստիարակեն հայրենասիրության ոգով:

Հետազոտության խնդիրները. ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները:

Պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ:

Գլուխ 1.1 Գրականության ակնարկ

<<Հայրենիք մի սպասեք օտարից և ճակատագրից, եթե դա ձեր

արյունով պաշտպանելու չափ հայրենասեր չեք>> :

Գարեգին Նժդեհ

Արժեհամակարգ հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն իմաստով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների ,հատկապես Հայոց պատմության դերը: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն:

Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ Միջնակարգ կրթության պետական չափորոշչում՝ որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ:[1]Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում է արժեքները և դրանց ձևավորումը,որոնք պետք է տա դպրոցը:[2] Արժեքային համակարգի կարևորությունը շեշտված է նաև Եվրոպայի խորհրդի կողմից հրատարակված

[1] https://www.arlis.am/documentview.aspx?docid=42195
[2] https://escs.am/am/news/8621

Կարողունակությունների կողմնորոշիչ շրջանակ `ժողովրդավարական մշակույթի համար աշխատության մեջ:[3]

Շարունակելով իր պատմական ուղին՝ ժամանակների ու դարերի անբաժան ուղեկից հայ ժողովուրդը հասել է մինչև մեր օրերը և ոտք է դնում արդեն նոր հազարամյակ՝ վերստին նվաճած իր ազատությամբ, իր նորանկախ պետականությամբ և այն պաշտպանելու ու զորեղացնելու անսասան վճռականությամբ: Այսպես, ժամանակների հոլովույթի մեջ է գոյացել մեր ժողովրդի պատմությունը, որը պետք է իմանա յուրաքանչյուր հայ մարդ, ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի՝ անկախ տարիքից, զբաղմունքից և ապրելու վայրից: Որտեղ էլ որ գտնվենք՝ Հայաստանում թե սփյուռքում, օտարության մեջ թե հայրենիքում, հայոց պատմությունն իմանալը պետք է բոլորիս, որովհետև այն ունի ճանաչողական և գործնական հսկայական նշանակություն:Նրանում է անթեղված մեր ժողովրդի դարավոր կենսափորձը, գոյության կերպն ու խորհուրդը: Առանց հայոց պատմության իմացության անհնար է ազգի լիիրավ անդամ կոչվել, որովհետև պատմությունը ոչ միայն ժողովրդի անցած ուղին, այլև նրա միսն ու արյունը, հողն ու ջուրը, նրա կերտած-ստեղծածը, նրա ոգին ու հոգեբանությունը, բնավորությունն ու խառնվածքն է:

Հայոց պատմությունը մեծ հնարավորություն ունի ձևավորելու ազգային գիտակցություն ու մտածողություն, նրա միջոցով ավելի շատ կարելի է հաղորդակցվել հայ ժողովրդի կյանքին,գիտությանը, հասարակական մտքին ու մշակույթին: Հայոց պատմության իմացությունն առավելագույնս հնարավորություն է տալիս իրականացնելու մեր ազգային իղձերը, ձևավորելու ու պահպանելու հայի կերպարը: Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ:[4]

Հայոց պատմությունը բովանդակում է դաստիարակչական վիթխարի ներուժ,հայրենասիրություն և ազգային արժանապատիվ գոյություն: Հայոց պատմության իմացությունը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության ապագա քաղաքացուն ուսումնառության ընթացքում ձեռքբերած գիտելիքներն ու ճանաչողական

[3] Կարողունակությունների կողմնորոշիչ շրջանակ՝ Ժողովրդավարական մշակույթի համար. Եվրոպայի խորհուրդ, հատոր 2

[4] Գևորգյան Ա. , Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002, էջ 65:

հմտությունները, հայոց քաղաքակրթության դարավոր ավանդույթները, փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնել հզորացման և բարգավաճման ուղին բռնած Հայաստանի անկախ պետությանը, պատկերացում կազմել համաշխարհային պատմության մեջ Հայաստանի և հայ ժողովրդի զբաղեցրած տեղի ու դերի մասին:[5]

Արժեքային համակարգը նախատեսում է ,որ դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է.

- Լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին,
- Կարևորի ազգային-պետական մտածողության և գործելակերպ ունենալը և դրսևորի դրան հասնելու ձգտում ու կամք,
- Ունենա ազգային ինքնագիտակցություն,
- Կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,
- Գիտակցի ներկան և ապագան կերտելու խնդրում ազգային պատմության դերը, ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը,
- Գիտակցի, որ կյանքում իր համար կարևորագույն արժեքներից են լինելու գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը և այլն:

Հայոց պատմություն առարկայի դասավանդման նպատակը հայկական քաղաքակրթության վերաբերյալ պատմական համակարգված գիտելիքի ձևավորումն է: Առարկան նպաստում է պետականակիր գիտակցություն, ազգային ինքնագիտակցություն և դիմագիծ ունեցող, սեփական ժողովրդի ու պետության դերակատարումը պատմության խորապատկերում գիտակցող քաղաքացու զարգացմանը, ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու քաղաքացու ձևավորմանը: Դասընթացը նպաստում է իր ինքնությունն ու քաղաքակրթությունների արժեհամակարգերը ճանաչող անհատի ձևավորմանը, որն էլ միտված կլինի իր գործունեությամբ նպաստելու հայ և համաշխարհային հասարակության զարգացմանն ու վերափոխմանը այն սկսելով իր անձից, իր սոցիալական ու բնական միջավայրից: Դասավանդման հիմնական նպատակներից մեկը, բացի սովորողներին զուտ պատմական երևույթներին ծանոթացնելուց, անհատի հոգևոր ու մտավոր զարգացման, անձի արժեքային համակարգի ձևավորմանը նպաստելն է, որի իրականացման համար անհրաժեշտ է սովորողներին հաղորդակից դարձնել հայ ժողովրդի հոգևոր ժառանգությանը, ազգային ու

[5]Ղուկասյան Ա, Հայոց պատմություն 8-9,Ուսուցչի ձեռնարկ,Երևան 2003,էջ 5:

համամարդկային իդեալներին ու ձգտումներին, պատմական հերոսների օրինակով նրանց մեջ սերմանել բարոյական արժեքներ՝ մարդասիրություն, բարություն, ընկերասիրություն, ազնվություն,պատվախնդրություն, պատասխանատվություն, հաստատակամություն, բարեխղճություն և լիարժեք ու ներդաշնակ մարդու բարոյակամային այլ հատկանիշներ: Աշակերտները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն: Արժեքների բուրգի գագաթին գտնվող ամենանվիրական ու մեծագույն արժեքը հայրենասիրության դաստիարակումն է սովորողների շրջանում: Հայկական պետականությանը նետված մարտահրավերները հրատապ են դարձնում հայրենիքի ապագա պաշտպանների պատրաստման խնդիրը: Այս գործը մշտական կատարելագործման կարիք ունի: Պատահական չէ, որ պետական մակարդակով խրախուսվում է երիտասարդների ռազմահայրենասիրական դաստիարակությունը: Դրանում մեծ է ազգային հերոսների կերպարների հանրահռչակման և այդ ոգով աշակերտներին կրթելու նշանակությունը: Հայ ժողովուրդն իր պատմության ողջ ընթացքում հերոսների պակաս չի զգացել, որոնց շնորհիվ դիմացել է հազարամյակների դաժան փորձություններին : Այդ հերոսների օրինակով մենք կրթում և դաստիարակում ենք մեր սաներին , որոնք իրենց իդեալն են դարձրել այս կամ այն նվիրյալին: Հայոց ազատագրական պայքարի դրվագները հայության ինքնահաստատման և դաժան գոյապայքարի վկայություններն են, որոնք ոգևորում են սերունդներին սովորեցնելով քննախույզ մոտեցում դրսևորել անցյալի իրադարձությունների նկատմամբ, կատարել ճշմարիտ եզրահանգումներ և քաղել իրատեսական դասեր:

Հայոց պատմության յուրաքանչյուր դասին նախապատրաստվելիս կարևորվում են բովանդակային մասերը, որոնք նվիրված են հայ ազատամարտի նշանավոր գործիչներին և ոգեշնչում ու հայրենասիրությամբ են վարակում սվորողներին : Դա առավել նպատակային և դյուրին է դառնում ազգային-ազատագրական պայքարի թեմաներն ուսումնասիրելիս: Փորձը ցույց է տալիս, որ աշակերտները մեծ հետաքրքրությամբ են լսում հատկապես ազատագրական պայքարի նվիրյալների կյանքի ու գործունեության մասին պատմող դրվագները:

Պատմության դասաժամերին է, որ աշակերտները, ուսուցչի օգնությամբ և ուղղորդմամբ, բացահայտում են, թե ովքեր են իրենք, ովքեր են իրենց նախնիները, որտեղ են ապրել, ինչ պատմություն ունեն, ինչ ներդրում ունեն համամարդկային մշակույթի ասպարեզում: Երբ աշակերտը ուսումնասիրում է հայոց պատմության հերոսական էջերը, ազատագրական

պայքարի դրվագները, հերոսների անձնվիրումն ու հայրենասիրության բազում օրինակներ, ինքն էլ կարծես «վարակվում է» և անպայման ձգտում հասնել այդ կերպարներին: Դրա վառ օրինակը հենց Ղարաբաղյան պատերազմի մասնակից մեր հերոս հայորդիներն են, որոնք իրենց հայրերի ու պապերի օրինակով նետվեցին մարտի՝ մոռանալով սեփական կյանքի մասին:

Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը պիտի լինի ՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: Հայոց պետականության ամրապնդման նպատակով անհրաժեշտ է դպրոցի կրթության և դաստիարակության բովանդակությունը հագեցնել ազգային մշակույթի արժեքներով՝ միաժամանակ ընդգծելով համամարդկայինը: Սովորողների դաստիարակության համար կարևոր է ազգային մշակութային արժեքները ճանաչելու, վերաիմաստավորելու, երեխաներին ազգային ոգով դաստիարակելու անհրաժեշտությունը: Այսօր շատ կարևոր է ապահովել նոր սերնդի դաստիարակությունը՝ ձևավորված ազգային հոգեբանությամբ, ազգային չափանիշներով ու ըմբռնումներով, առանձնահատկություններով: Ազգային արվեստի, կենցաղի, խորհրդանիշների, հայրենի բնաշխարհի յուրահատկությունների, ժողովրդական բանահյուսության հետ ծանոթությունը, հաղորդակցումը, դա նպաստում է սովորողների ազգային բարոյական հիմքերի ձևավորմանը, որը միշտ էլ եղել է մանկավարժական գիտության հիմնական հիմնահարցերից մեկը:

21-րդ դարում մեծ տարածում գտած գլոբալացման ճանապարհին կորսվում են ազգային արժեքներն ու դիմագիծը, և ամեն ինչ տանում է համաշխարհայնացման /գլոբալիզացիայի/, այդ պատճառով հիմա առավել քան երբևէ պետք է անընդհատ աշակերտների հետ զրուցել ազգային արժեքների դերի և կարևորության մասին, անընդհատ հիշեցնել, թե ովքեր են իրենց նախնիները, ինչ փառավոր անցյալ են ունեցել և որ մենք պարզապես իրավունք չունենք կորցնելու այն, ինչ մեր պապերն իրենց արյան գնով պահել ու փոխանցել են մեզ:

Առաջնահերթություն է, որ աշակերտները բացահայտեն, հետազոտեն հայոց պատմության վաղնջական ժամանակներից մինչև մեր օրերը և վերհանեն հույժ կարևոր փաստերից մեկը, այն է որ հայ ժողովուրդը եկվոր չէ, այլ ձևավորվել ու պատմական հազարամյա ուղին անցել է իր բնօրրանում ՝ Հայկական լեռնաշխարհում: Հայ ժողովուրդը, շփվելով և փոխազդեցությունների մեջ լինելով տարբեր քաղաքակրթությունների հետ, պահպանել ու զարգացրել է իր ինքնատիպ մշակույթը, ազգային նկարագիրն ու գոյապատկերը: Դրա

շնորհիվ հայությունը հազարամյակների միջով հասել է մարդկության պատմության արդի փուլին: Ահա թե ինչու հայկական մշակութային հարուստ ժառանգության համակողմանի ուսումնասիրումը կազմել է դասագրքերի կարևոր բովանդակային ուղղություններից մեկը:

Հայոց պատմության բովանդակային առանցքը կազմել է նաև հայկական պետականության պատմությունը, որը սերտորեն կապվում է նույն քաղաքակրթական խնդիրների հետ: Հայ ժողովուրդը մշտապես ապրել ու արարել է մի տարածաշրջանում, որտեղ միշտ հատվել ու բախվել են տարբեր ազգերի ու քաղաքակրթությունների շահերն ու հակասությունները: Մարդկության պատմության արդի փուլում հայ ժողովուրդը դարձյալ բախվում է այս խնդրին, քանի որ մեր տարածաշրջանում դարձյալ բախվում են աշխարհի մեծ պետությունների շահերը և յուրաքանչյուր երկիր փորձում է իր կողմը գրավել հայ ժողովրդին: Դպրոցականների ազգային մտածողությունը խթանելու նպատակով պետք է սովորողներին հանձնարարել լրացուցիչ նյութեր հավաքել օրինակ, հայդուկների, ազատամարտիկների կյանքի, գործունեության վերաբերյալ: Այս ընթացքում սովորողները կհարստացնեն իրենց գիտելիքները տվյալ նյութի շուրջ, նաև կսովորեն ինքնուրույն օգտվել այլ աղբյուրներից, զատել տեղեկույթի կարևորն ու երկրորդականը, հանգել ինքնուրույն եզրհանգումների, ձևավորել սեփական դիրքորոշումը:

Կարևոր է նաև անդրադառնալ ինքնաճանաչողության հարցերին: Ինքնությունը բազմաթիվ անհայտներով մի կառույց է՝ պարուրված խորհրդանշաններով, տարատեսակ իրապատումներով, տեսլականներով ու առասպելներով, որոնք ժամանակի ընթացքում ստանում են տարբեր բացատրություններ: Այս առումով միշտ էլ առաջանում է ինքնության (ինքնաճանաչողության) պատմական ձևերի իմաստավորման, ավանդվածի մեկնաբանության և ազգային ինքնության տարրերի արդիականացման անհրաժեշտություն: Ինքնաճանաչողությունը պարտադիր ենթադրում է երկխոսություն անցյալի հետ, որի ժամանակ անցյալը պետք է դառնա ներկայի մաս, ներկայի անցյալ, որովհետև ինքնության ցանկացած հարացույց անպատկերացնելի է առանց պատմական շերտի:

Գլուխ 1.2 Ազգային և համամարդկային արժեքների հարաբերակցությունը և կարևորությունը նոր սերունդների դաստիարակության գործում

Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող որակական, բովանդակային բազմաթիվ փոփոխություններն իրենց անմիջական գործունեությունն են ունենում անձի ձևավորման, արժեքային համակարգի փոփոխման, սոցիալականացման վրա: Սոցիալական ինստիտուտները երբեմն դժվարանում են իրականացնել իրենց գործառույթները, քանի որ տեղի է ունեցել բարոյամշակութային արժեքների վերաիմաստավորում: Անձի սոցիալականացման տարբեր փուլերի ընթացքում խոր հակասություններ են ստեղծվում համամարդկային և ազգային, հասարակական և անձնային արժեքների միջև: Տարիքային շրջաբաժանմանը զուգընթաց փոփոխվում են բարոյամշակութային արժեքները, որոնք ուղղակիորեն արտահայտվում են անձի աշխարհայացքում, դաստիարակվածության, կրթվածության, զարգացվածության մակարդակում, վարքագծում, հաղորդակցական մոդելներում:[6] Համաշխարհայնացմամբ պայմանավորված հասարակական արժեքների ձևավորման հիմքում ընկած քաղաքական, տնտեսական, մշակութային, կրոնական և այլ գործոններ երբեմն խոչընդոտում են անհատի անձի ներդաշնակ և լիարժեք ձևավորմանը:

Ամեն մի ժողովրդի կյանքում դաստիարակության խարիսխը, մարդկային բանականության հաստատման համար միակ ճշմարիտ ճանապարհը այնպիսի քաղաքացու ձևավորումն է, որն իր մեջ կկրի իր իսկ ազգին հարիր, իր նախնիներից ժառանգած ազգային արժեքները: Վերջիններս մարդու խմբային ինքնության բոլոր դրսևորումներում դիտարկվում են որպես «ամենահիմնարարն ու տարողունակը»: Անընդհատ վերափոխվող հասարակության պայմաններում փոխվում են անցյալի մշակութային արժեքների բովանդակության և նշանակության մասին մոտեցումներն ու նրանց փոխանցման մեթոդները: Հետևաբար նոր մոտեցումներ մշակելու խնդիր է ծագում, անհրաժեշտություն է առաջանում յուրացնելու ժամանակակից մշակութային միջավայրը ձևավորող մշակութային ժառանգության բանալիները: Այս հանգամանքն ավելի է բարդացնում ազգային արժեքների պահպանության խնդիրը, որի լուծման հարցը դրված է ինչպես պետության, այնպես էլ յուրաքանչյուր քաղաքացու առջև: 21-րդ դարը հումանիզմի դրսևորման, տեխնիկական առաջընթացի, գիտական ուսումնասիրությունների, տեղեկատվության մեծ հոսքի և զարգացման մի դարաշրջան է, որտեղ ձևավորվում, դաստիարակվում և զարգանում է մերօրյա էթնոկիրը: Ինչպիսի՞ն է ժամանակակից սերունդը, ի՞նչ պահանջմունքներ, հետաքրքրություններ ունի,

[6]Սարգսյան Ա.Ա.,Համամարդկային և ազգային արժեքները սոցիալական տարբեր ինստիտուտներում, հոդված,ԵՊՀ,Իջևան, 2019թ.:

ինչպիսի՞ արժեհամակարգով է առաջնորդվում: Գաղտնիք չէ, որ յուրաքանչյուր սերունդ ունի իր կատարելատիպը, ըստ որի էլ չափվում են արժեքներն ու նպատակները: Սերունդներն օղակ են անցյալի ու ապագայի միջև և ապահովում են ինչպես տվյալ ժամանակաշրջանին բնորոշ արժեքների հաջորդականությունը, այնպես էլ՝ փոփոխումը:

Լիարժեք էթնոկրի անձի ձևավորման, նրա սոցիալականացման գործընթացը պատմական տարբեր ժամանակներում տարբեր է եղել՝ պայմանավորված տարատեսակ հանգամանքներով և սկսած տվյալ ժամանակին բնորոշ պատմական իրադարձություններով ու ավարտած մարդկային մտածելակերպի բարդ և անկառավարելի փոփոխություններով: Այս տեսանկյունից 21-րդ դարն էլ բացառություն չէ: Անկախացման տարիներին Հայաստանին պատուհասած երկրաշարժը, Արցախյան գոյամարտը, սոցիալ-տնտեսական ճգնաժամը և քաղաքական արտաքին ու ներքին բազում գործոններն ունեցան իրենց տխուր հետևանքները՝ պարարտ հող ստեղծելով բացասական տարաբնույթ երևույթների աշխույժ գործունեության համար: Նման մարտահրավերների առկայության պայմաններում երիտասարդ սերնդի՝ նախնիներից ժառանգած արժեհամակարգի մասին մակերեսային գիտելիքների կամ բացարձակ չիմացության հետևանքով ազգային արժեքները հաճախ մղվեցին երկրորդական պլան. դյուրին և հեշտընկալ դարձան համաշխարհայնացման կործանարար պահանջները: Վերջիններս բացասական ազդեցություն ունեցան երիտասարդ սերնդի ինքնության, կենսակերպի ու արժեհամակարգի վրա: Ի տարբերություն նախորդ դարաշրջանի՝ մերօրյա ազգային առաքինություններից շատերն այլ ընկալում են ձեռք բերել, փոխվել են նաև արժեքային պատկերացումները: Այսինքն՝ էթնոմշակութային առանձնահատկությունները որոշ չափով մղվել են հետին պլան՝ վտանգելով և մշակութային ինքնությունը խոցելի դարձնելով արտաքին տեղեկատվության համար: Վերոնշյալ խնդրի հաղթահարման գործը դրված է նոր սերնդի ուսերին: Որքան փոփոխական են խնդիրները, այնքան կայուն է դրանք լուծելու անհրաժեշտությունը: Ուստի այս սերունդը տարբերվում է ոչ միայն առաջադիր խնդիրներով, այլև վերջիններս հաղթահարելու եղանակներով ու արդյունքներով: Հետևաբար, արդի մարտահրավերների պայմաններում պետականության ամրապնդման համար չափազանց կարևոր է ոչ միայն ժամանակակից, քաղաքական-տնտեսական և շուկայական հարաբերություններն ու օրենքներն ըմբռնող, այլև ազգային մտածողություն ու հայեցի դաստիարակություն ունեցող սերնդի կերտումը: Այսօրինակ իրավիճակներում անփոխարինելի է սոցիալական տարբեր ինստիտուտների դերակատարությունն ազգային-ավանդական արժեքների պահպանման, փոխանցման գործում: Վերջիններս այն հենասյուներն են, որոնք ապահովում են մտավոր ներուժով հարուստ սերունդ ունենալու, ազգային և համամարդկային մշակութային արժեքները

պահպանելու և սերնդեսերունդ փոխանցելու, արժեքային կայուն հայացքներ ունեցող, ազգին նվիրված քաղաքացիներ դաստիարակելու, կրթելու գործընթացը: Սոցիալական ինստիտուտների հիմնական նպատակը տիրող մշակութային արժեքների փոխանցումն է: Դրանով երեխան ոչ միայն ձևավորվում ու զարգանում է, այլև հարմարվում է հասարակական կյանքին՝ ձեռք բերելով անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, վարքագծային նորմեր, ծանոթանալով և յուրացնելով ազգային և համամարդկային մշակույթը:[7]

Սոցիալական ինստիտուտների մեջ անգնահատելի է ընտանիքի դերը՝ որպես մարդկության կողմից պատմական երկարատև զարգացման ընթացքում ստեղծված մեծագույն արժեք: Ընտանիքը ոչ միայն տվյալ ժամանակաշրջանի մշակույթի կրողն է, այլև փոխանցողը: Ներընտանեկան ավանդույթներն ու սովորույթներն օգնում են հայեցի դաստիարակություն տալ գալիք սերունդներին՝ նրանց մեջ ձևավորելով ազգային ինքնագիտակցության ոգի: Ինքնության հարցը ներընտանեկան միջանձնային փոխհարաբերություններում դրսևորվում է հենց ազգային ինքնագիտակցության, մայրենի լեզվին տիրապետելու, պապենական արմատները ճանաչելու, Հայ առաքելական եկեղեցու պատկանելության և ազգային սովորույթների պահպանման գործընթացներում: Ընտանիքում է երեխան առաջին անգամ հաղորդակցվում մշակութային արժեքներին, յուրացնում հասարակական վարքագծային նորմեր, կանոններ, իրականացվում երեխայի առաջնային սոցիալականացումը, հարմարումը կյանքին: Գաղտնիք չէ, որ յուրաքանչյուր ժամանակաշրջան առանձնանում է իր սերնդին բնորոշ առանձնահատկություններով, նախասիրություններով, կողմնորոշումներով, և ավագ սերնդի կողմից ընդունված հասարակական կյանքի որոշ նորմեր կարող են տարբերվել հաջորդ սերնդի հայացքներից: Վերջիններս արագ հարմարվում են նոր իրավիճակին՝ ձևավորելով արժեքային նոր համակարգ, որը արմատապես կարող է տարբերվել նախորդից: Ինչ խոսք, հասարակությունը չի կարող զարգանալ միայն պահպանողականության հիմքի վրա, քանի որ անընդհատ գալիս է նորը՝ համալրելով եղած արժեքները: Պարզապես քայլելով ժամանակին համընթաց, հաղորդակից լինելով համամարդկային արժեքներին՝ անհրաժեշտ է առաջնայնությունը տալ ազգայինին:

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի նաև հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այս նպատակն իրագործելու

[7] Ա. Հ. Սարգսյան, Մշակույթի տեսություն, Եր., 2003, էջ 29:

համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը: Պատահական չէ արևմտահայ մանկավարժ Նիկողայոս Զորայանի մտահոգությունը, թե «ինչու համար դաստիարակութիւնը չի յաջողիլ ազգին մէջ, կամ ինչ ընելու է, որ ազգային դպրոցներն առաջ երթան»:[8] Եվ ինքն էլ պատասխանում է իր հարցադրմանը՝ առաջարկելով վերակառուցել դպրոցը՝ մոտեցնելով այն ազգային ակունքներին, բարձրացնելով հասարակության կենսամակարդակը և դպրոցները համալրելով մասնագիտական բարձր ունակություններ ունեցող մանկավարժդաստիարակներով: Հետևապես, ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ: Այս խնդրում որպես գործիքակազմ մեծ դերակատարություն ունի ժողովրդական բանահյուսությունը՝ իր ժանրային բազմազանությամբ, որը կարող է երիտասարդ սերնդի ազգային ինքնության, բարոյական դաստիարակության գործընթացը դարձնել առավել արդյունավետ՝ հաշվի առնելով նրա ունեցած բարոյադաստիարակչական մեծագույն արժեքը: Ուստի 21-րդ դարի դպրոցում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը: Այդ ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները: Հայ ժողովրդի ավանդույթներում է, որ վառ կերպով արտացոլված են մեր ազգի ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը: Այս ամենն է, որ անհրաժեշտ է ավանդել ժամանակակից էթնոկրին: Այդպես նա պիտի հասնի այն գիտակցության, որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ, գիտելիքների բարձր մակարդակով ու մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ, այլև պահպանմամբ: Սերունդ, որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժանիքները:

[8]Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002, էջ 65:

Գլուխ 1.3 Գործնական համատեքստ

Ժամանակակից դասին ներկայացվող կարևոր պահանջներից մեկն էլ ուսուցման մեթոդների ընտրությունն է, ավանդականի և նորագույնի վարպետ զուգակցումը:

Պատմության դասին օգտագործվող արդյունավետ մեթոդներ են Մտագրոհը, Վենի դիագրամը, *T*-աձև ,*M*-աձև աղյուսակները ,Համառոտ դասախոսությունը, Գաղափարների քարտեզագրում, Խճանկարը ,Գծակարգեր և այլն:

Համագործակցային ուսուցման ձևը նոր ժամանակների գլխավոր պահանջներից է և արդյունավետ ձև է: Այն շատ է կարևորվում ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում: Խմբի անդամների համագործակցված աշխատանքը հնարավորություն է ընձեռում կարողությունների և հմտությունների, երևակայության տարբեր մակարդակ ունեցող աշակերտներին համախմբել ուժերը, ջանքերը ներդնել ընդհանուր նպատակին հասնելու գործում: Այս մեթոդը դասապրոցեսն ավելի բազմազան, հետաքրքիր է դարձնում, բարձրացնում երեխաների ինքնագնահատականը, խթանում մոտիվացիան:

Ելնելով հետազոտության մեջ առաջադրված խնդիրներից կարելի է կիրառել հետևյալ մեթոդները.

- ✓ Կերպարային քարտ- սա հրաշալի միջոց է պատմական կարևոր իրադարձությունները « տարբեր կերպարների դիտանկյունից ուսումնասիրելու համար: Քարտը ներկայացնում է տվյալ իրադարձության կերպարների մտադրությունները, հուզական վիճակները, տեսանկյունները: Կերպարային քարտը կարող է կիրառվել պատմական ակտիվ մտածողություն խթանող տարատեսակ հարցադրումների քննարկման համար:
- ✓ Քարտեզային քննարկում. Քարտեզները հրաշալի միջոց են աշխարհագրական գիտելիքը պատմության արդյունավետ մաս դարձնելու,պատմության աշխարհագրական ընկալումը ձևակերպելու համար:
- ✓ Պատկերի ակնթարթային դիտում-սրանք վերլուծական հարուստ տեղեկություններ են պարունակում:
- ✓ Ճիշտ պատասխանի գուշակում. Պատմության ուսուցումը կարող եք հարստացնել դասին զուգահեռ խաղերով՝ սովորողներին օգնելով պարբերաբար անրադառնալ արդեն անցած նյութի փաստական հատվածին:[9]

[9]Լալայան Կ. Պատմության դասերի պլանավորման նմուշ -օրինակներ, Երևան 2009թ. էջ 6-8:

Ինչպիսի գործողություններով եմ պատրաստվում հետազոտական աշխատանքս կյանքի կոչել: Առաջնային է հայոց պատմության դասաժամի ընթացքում կիրառել վերը նշված միջոցներն ու մեթոդները: Ներքևում կներկայացնեմ դասի պլանի նմուշ, որը կօգնի սովորողի արժեհամակարգի ձևավորմանը:

Դասի պլան 1

Ուսուցիչ՝ Սամվել Առաքելյան

Առարկա՝ Հայոց պատմություն

Դասարան՝ 11

Թեմա	Հայ ժողովուրդն Առաջին աշխարհամարտի տարիներին: Ինքնապաշտպանական հերոսամարտերը 1915 թ
Օգտագործվող նյութեր	Դասագիրք , տետր ,՝՝Արևմտահայության մեծ եղեռն և հայերի ինքնապաշտպանական մարտերի քարտեզը ՝՝ , հատվածներ Մ. Արզումանյանի ՝՝ Հայաստանը 1914 – 1917 թ.թ. ՝՝ գրքից ,և Գուրգեն Մահարու ՝՝ Այրվող այգեստաններ՝՝վեպից , նկարներ , ՏՀՏ , պաստառներ ,լրացուցիչ գրականություն ,տեսաֆիլմ
Ամբողջական Պատկեր Դասի նպատակը	Ա . մակարդակ –Ներկայացնել ինքնապաշտպանական մարտերի , դրանց կազմակերպիչների ու մասնակիցների անձնուրացության ու խիզախության , ինչպես նաև հերոսամարտերի հետևանքների նշանակությունների մասին : Բ. Մակարդակ - Սահմանել հերոսամարտերի հիմնական իրադարձությունները , կենտրոնները ,տարեթվերը ,գործիչներին: Գ. Մակարդակ - Վերլուծել ինքնապաշտպանական մարտերի պատճառներն ու հետևանքները , բացահայտել դրանց էությունը , համեմատել 1894 -1896 թթ. ինքնապաշտպանական մարտերի հետ , գտնել տարբերությունները , առանձնացնել բնորոշ գծերը , կատարել ընդհանրացում , ցույց տալ կոտորածների և ինքնապաշտպանական կռիվների միջև եղած տրամաբանական կապերը:
Վերջնարդյունք	Աշակերտը կկարողանա գիտակցել ,որ 1915 թ-ը ոչ միայն մեծ ողբերգության , այլև հերոսական մաքառումների տարի է՝ հանուն ֆիզիկական գոյության և արժանապատվության , Ըմբռնել ցեղասպանության դատապարտման և ճանաչման գործընթացի նշանակությունը մեր ժողովրդի պատմական ճակատագրում, Ընդունել 1915 թ.-ի հերոսամարտերը որպես թուրքական բռնությունների ու կոտորածի դեմ ուղղված պոռթկում , որպես ինքնապաշտպանության դրսևորում հասկանալ ,որ միայն զենքը ձեռքին հնարավոր է հասնել հաղթանակի՝ պատվավոր մահը գերադասելով ստրկական կյանքից, Գնահատել և արժևորել ինքնապաշտպանական կռիվների դերն ու նշանակությունը հայ ժողովրդի գոյատևման համար մղված պայքարում, Նպաստել աշակերտների մտքի , կամքի վճռականության և համառության զարգացմանը ,ընդլայնել նրանց մտահորիզոնը:

Գործողություններ Ժամ / 45	Պլանավորած ՈՒԳ Ռազմավարություններ. Կարճ դասախոսություն, Խմբային աշխատանք, Հարցաշար – աղյուսակ, Քննարկման հարց ,հայտորոշիչ թեստ:	Առանցքային հարցեր
Ընթացքը 5 րոպե Խթանում Իմաստի ընկալում 25 րոպե Անրադարձ 7 րոպե	Դասախոսությամբ ներկայացնել նյութը, բացատրել հանձնարարությունը: Դասարանը բաժանել խմբերի և տալ առաջադրանք խմբերին : Առաջադրանքը ավարտելուց հետո լսել խմբերին: Հայտորոշիչ թեստով ստուգել , թե որքանով յուրացվեց թեման:	1. Երբ տեղի ունեցավ Զեյթունի ապստամբությունը: 2.Առաջին ինքնապաշտպանական մարտերը երբ և որտեղ տեղի ունեցան : 3. Երբ սկսվեց Մուշի հայության ինքնապաշտանական մարտերը: 4. Ինչքան բնակչություն ուներ Սասունը և քանիսը մասնակցեցին ինքնապաշտպանական մարտերին: 5.Սուետիայի հայերի ինքնապաշտպանական մարտերի պատմական նշանակությունը:
		Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա. 1.Ինքնապաշտպանական մարտերի ժամանակագրությունը, 2.Կազմակերպիչներին, 3.Ինքնապաշտպանական մարտերի պատմական նշանակությունը:
Գնահատում- 5 րոպե	Միավորային , ձևավորող:	
Տնային առաջադրանք- 3 րոպե	Կազմել հարցաշար աղյուսակ:	

ՕՐՎԱ ԴԱՍԻ ՊԼԱՆ

Ուսուցիչ՝ Սամվել Առաքելյան -----/-----/ -----թվական

Առարկա	Հայոց պատմություն

Դասարան/կիսամյակ	11-րդ դասարան/ 2-րդ կիսամյակ
Թեմա	Հայկական հարցը 1912-1914թթ.
Օգտագործվող նյութեր	Դասագիրք, աշխատանքային տետր, քարտեզ / Ռ. Թադևոսյան,Արևմտյան Հայաստանը 1941 թ., Եր.,2007/ատլաս/Բ. Հարությունյան Բ-մաս էջ 69/ՏՀՏ գործիքներ,պաստառ,նկարներ
Ամբողջական Պատկեր Դասի նպատակը	Ա մակարդակ - Սահմանել Հայկական հարցի բովանդակությունը 1-ին աշխարհամարտի նախօրեյին: Բ մակարդակ – Նկարագրել հայ ժողովրդի ազգային ձգտումները, Պաշտպանի այն տեսակետը ,որ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ անձը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Գ մակարդակ – Վերլուծել ,ճանաչել և գնահատել հայ քաղաքական և հոգևոր գործիչներին ,որոնք Եվրոպական և Ռուսական կառավարությունների առջև պաշտպանում էին հայկական հարցը; Արտահայտել սեփական գաղափարները և արժեքները վիճարկելու ցանկություն:
Վերջնարդյունքը	Ա մակարդակ – Կկարողանա հիշել Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնլու վերաբերյալ Ռուս-Թուրքական համաձայնագրի տարեթիվը և կկարողան թվարկել այն դրական փոփոխությունները , որոնք նախատեսվում էին բարենորոգումների և Ռուս-Թուրքական համաձայնագրի շրջանակներում: Կկարողանա մատչելի կերպով ներկայացնել իր ասելիքը: Բ մակարդակ –Կկարողանա բնութագրել հայկական հարցի լուծմանը նպաստող գործոնները,և մի քանի գործիչների այդ ուղղությամբ կատարած աշխատանքները , 1ին աշխարհամարտից առաջ ստեղծված ռազմաքաղաքական ճամբարների ռուսական և եվրոպական երկրների քաղաքականության մասին:Խնդրի հանդիպելիս կփորձի հասկանալ, թե ինչն է եղել դրա առաջացման պատճառը: Գ մակարդակ – Կկարողանա գնահատել հայ ժողովրդի ,նրա հոգևոր և քաղաքական գործիչների հայրենանվեր գործերը՝հայկական հարցին լուծում տալու համար, կկարողանա համեմատել փաստերը,վերլուծել,առժևորել հայկական հարցի վերաբացմա ն նշանակաությունը և արդիականացնել թեման: 19 Կկարողանա քննադատորեն անդրադառնալ անցյալի փորձին՝հետագա առաջընթացի համար:
Դասի ընթացքը և մեթոդները:	Տ –ա ձև ,m-աձև աղյուսակներ , գծային ուղիղ,մտագրոհ դասախոսություն ԳՈՒՍ մեթոդ: 5 ր.-ողջունել աշակերտներին,կատարել հաշվառում,տնային առաջադրանքների ստուգում,անհասկանելի հարցերի քննարկում; 5 ր. -Նախորդ դասի ամփոփում ,մտագրոհ 4-5 ր. – գծային ուղիղի միջոցով գրատախտակին գրել կարևոր թվերը,իրադարձությունները,որոնք

<table>
<tr><td>Խմբային աշխատանք:</td><td>կապ ունեն հայկական հարցի հետ(1856թ. Ղրիմի պատերազմ,Արևելյան հարց,1877-1878թթ.,Սան Ստֆանո,16 և 25-րդ հոդվածմեր,Բեռլինի կոնֆերանս,61-րդ հոդված, Մայիսյան ծրագիր,1894-1896թթ.,հայկական կոտորախներ,1908թ.,երիտթուքեր, և այլն):Աշակերտները պետք է գրառումնր անեն իրենց տետրերում: 20ր.- քարտեզի վրա ցույց տալով Թուրքիայի տարածքը և հայաբնակ վիլայեթները,սեղմ դասախոսել այնուհետև խմբերով աշխատել m-աձև և T-աձև աղյուսակներով:
<table>
<tr><td>Հայկական ծրագիր</td><td>Ընդհանրություն</td><td>Թուրքական ծրագիր</td></tr>
<tr><td></td><td></td><td></td></tr>
<tr><td></td><td></td><td></td></tr>
<tr><td></td><td></td><td></td></tr>
</table>
<table>
<tr><td>1913թ. Հունիսի 4-ի ռուսական բարենորոգումների ծրագիրը</td><td>1914թ. Հունվարի 26-ի ռուսթուրքական համաձայնագիրը</td></tr>
<tr><td></td><td></td></tr>
<tr><td></td><td></td></tr>
</table></td></tr>
<tr><td>Ամփոփում</td><td>Ամփոփելով գրել ռուսական բարենորոգումների և ռուս-թուրքական համաձայնագրի կարևոր կետերը և կազմակերպել քննարկում,որի արդյունքում աշակերտները գնահատվում են :</td></tr>
<tr><td>Տերմիններ և հիմնական գաղափարներ</td><td>Հայկական հարց,հայ-ազգային կենտրոնական բյուրո,դիվանագիտական հարաբերություններ,բարենորոգումների ծրագիր:</td></tr>
<tr><td>Գնահատում</td><td>Միավորային գնահատում,գնահատվում են առավել ակտիվություն ցուցաբերած աշակերտները:</td></tr>
<tr><td>Տնային առաջադրանք</td><td>Ցուցաբերել տարբերակված մոտեցում ,պատասխանել դասարքերի թեմայի հարցերին,լրացուցիչ տեղեկություններ հավաքել այդ ժամանակաշրջան հասարակական , քաղաքական և հոգևոր գործիչների մասին,կազմել պաստառներ:</td></tr>
<tr><td>Հարցեր</td><td>Փաստերի համադրմամբ և հարցերով վեր հանել հայակական հարցի պատմական նշանակությունը և արդիականությունը:</td></tr>
</table>

Ամփոփում

Որպես ամփոփում կարելի է փաստել, որ անհրաժեշտ է ազգային արժեհամակարգի ձևավորմանը դպրոցում տարբեր դասաժամերին կարևոր տեղ հատկացնել, իսկ պատմության՝ հատկապես հայոց պատմության դասաժամերին ,առավել ևս:

Այժմ հայ ժողովուրդն ու Հայաստանի Հանրապետությունն ապրում են դժվարագույն ժամանակներ, երբ վտանգված է հայ ժողովրդի ինքնության և հայոց պետականության գոյությունը: Հիմա նոր Ավարայրի ու նոր Սարդարապատի կարիքը կա, հիմա առավել քան երբևէ պետք է համախմբվել մեկ միասնական բռունց դառնալ, որպեսզի հնարավոր լինի հաղթահարել մեր պետության գլխին կախված հերթական վտանգը:

Ժամանակի հրամայականն է կրթել ու դաստիարակել ազգային մտածողությամբ ու արժեքներով տոգորված սերունդ, նրանց մեջ ներարկել հայրենասիրություն, համախմբվածություն և անկոտրում կամք ,ցույց տալ, թե ինչերի է ընդունակ իր հողն ու ջուրը ամեն գնով պաշտպանելու պատրաստ զինվորը, հայ գյուղացին , հայ երեխան :

Սովորողներին պետք է ոգևորել անցյալի պատմական հերոսական դրվագներով, թե ինչպես են փոքրաթիվ հայկական ուժերը հաղթել թշնամու բազմաքանակ ու լավ սպառազինված ուժերին, փորձելով հիմնավորել, որ հաջողության հասնելու գրավականն ամենևին էլ թվական գերակշռությունը չէ, այլ նպատակը :Հայ ժողովրդին բաժին է հասել դժվար ու պայքարով լի ճակատագիր, բայց նա միշտ պայքարել է ու իր զավակների արյան գնով ամրագրել իր գոյության իրավունքը:

Արժեքային համակարգը նախատեսում է ,որ դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է՝ լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին, կարևորի ազգային-պետական մտածողության և գործելակերպ ունենալը և դրսևորի դրան հասնելու ձգտում ու կամք: Ունենա ազգային ինքնագիտակցություն,կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը, ունենա արդարության , լավատեսության և պատասխանատվության զգացում, գիտակցի ներկան և ապագան կերտելու խնդրում ազգային պատմության դերը, գիտակցի իր ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Երևան, 2003թ.:
2. Ա. Հ. Սարգսյան, Մշակույթի տեսություն, Երևան, 2003թ.:
3. Բարխուդարյան Վ.,Հակոբյան Ա,.. Հայոց պատմության դասագիրք, 9-րդ դասարան, Երևան, 2019թ.:
4. Գևորգյան Ա. ,Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Երևան, 2002թ.:
5. Գիրք պատմության ուսուցման Ինչու՞, ինչպե՞ս ,Պարադիգմա կրթական հիմնադրամ, Երևան 2020թ.:
6. Լալայան Կ, Պատմության դասերի պլանավորման նմուշ-օրինակներ, Երևան, 2009թ.:
7. Կարողունակությունների կողմնորոշիչ շրջանակ՝ ժողովրդավարական մշակույթի համար. Եվրոպայի խորհուրդ, հատոր 2:
8. Ղուկասյան Ա.,Հայոց պատմություն 8-9, Ուսուցչի ձեռնարկ,Երևան, 2003թ.:
9. Սարգսյան Ա.Ա.,Համամարդկային և ազգային արժեքները սոցիալական տարբեր ինստիտուտներում, հոդված,ԵՊՀ,Իջևան, 2019թ.:
10. https://www.arlis.am/documentview.aspx?docid=42195
11. https://escs.am/am/news/8621